ՆԱԴՍՕՆԻՆ

ԿՈՍՏ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆԻ

Անագորոյն ճակատագիրը քո դժբաղդ
Լոկ հալածանք վիճակել էր քեզ բաժին,
Եւ դու պօէտ, որպէս զինւոր ճշմարիտ—
Մարտ մղելով մինչև բոպէն քո վերջին
Պաշտպանեցիր միշտ վսեմը և բարին։

—

Քո երգերը դառն, տխուր թախծալի
Հառաչանք են տանջւած, վշտոտ վեհ սրտի.
Եւ կրելով ծանր խաչը այս կեանքի
Չանում էիր լուծել գժւար, ծանրագին
ժամանակիս բարդ հարցերը կնճռալի...

—

Բայց ապարդի՞ւն. կոյր ամբոխը մեր տգէտ
Անշարժութեան խորին քնով մրափած—
Քո քաղցած եղբայրական այն սուրբ սէր
Չը հասկացաւ—կրկին բռնած իւր ուղին
Նա գնում է անուշադիր, անտարբեր...

Բագու. 1890 թ. փետրուար։